ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց` **1903/B09** «Միջազգային մասնավոր իրավունք»

Որակավորման աստիճան` բակալավրի կրթական ծրագիր

Կազմել է` իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանց

ԵՊՀ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ – 2013

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Դասընթաց՝ 1903/B09 «Միջազգային մասնավոր իրավունք» (2 կրեդիտ)**
**Շաբաթական 2 ժամ (դասախոսություն՝ 24, սեմինար՝ 8, ինքնուրույն աշխատանք 28)**
**7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց**

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել օտարերկրյա տարրով ծանրաբեռնված՝ մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման հիմքերին, կոլիզիոն նորմերի տեսությանը, միջազգային մասնավոր հարաբերությունների միջազգային նյութա-իրավական կարգավորման առանձնահատկություններին, մասնավոր հարաբերությունների պարտիկուլյար և ունիվերսալ իրավական կարգավորման հիմնախնդիրներին, միջազգային մասնավոր հարաբերությունների այլընտրանքային իրավական կարգավորման ժամանակակից մեխանիզմներին: Նման գիտելիքների տիրապետումը ժամանակակից իրավաբանին կօգնի տեսնել արդի գլոբալիզացիոն գործընթացների զարգացումները, միջազգային մասնավոր շրջանառությունը պայմանավորող գործոնները՝ տնտեսական հարաբերությունների ինտերնացիոնալիզացիան, բնակչության միգրացիան և գիտատեխնիկական առաջընթացը, ինչն էլ իր հերթին հնարավորություն կընձեռի մասնագիտորեն գրագետ սպասարկելու այդ շրջանառությունը:

**Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ձեռք կբերի

**ժամանակակից գիտելիքներ՝**

- Օտարերկրյա տարրով ծանրաբեռնված մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտության և իրավական կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ,
- Միջազգային մասնավոր հարաբերությունների կոլիզիոն իրավական կարգավորման ներպետական և միջազգային հարթությունների, դրանց փոխհարաբերակցության և ներդաշնակեցման խնդիրների վերաբերյալ,
- Միջազգային մասնավոր հարաբերությունների միջազգային նյութա-իրավական կարգավորման առանձնահատկությունների և խնդիրների վերաբերյալ,
- Միջազգային մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման միջազգային այլընտրանքային մեխանիզմների կիրառման և այդ հարցերով դատական պրակտիկայի վերաբերյալ,
- Միջազգային մասնավոր հարաբերություններից բխող վեճերի լուծման առանձնահատկությունների և պրակտիկայի վերաբերյալ:

**Դասընթացն ուսումնասիրելու արդյունքում ուսանողների մոտ կզարգանան մասնագիտական հմտություններ հետևյալ ուղղություններով՝**

- Տիրապետել միջազգային մասնավոր հարաբերություններին վերաբերող ՀՀ օրենսդրական կարգավորումները և դրանք կիրառել պրակտիկ աշխատանքում,
- Բացահայտել միջազգային մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման մակարդակն ու որակը և տալ գնահատական,
- Վերհանել միջազգային մասնավոր իրավունքի խնդրահարույց տեսական դրույթները, վերլուծել դրանք և դրանց հիման վրա զարգացնել սեփական դատողությունները,
- Վերլուծել միջազգային մասնավոր իրավահարաբերություններին առնչվող դատական ակտեր, այլ մարմինների որոշումներ և անել եզրահանգումներ,
- Միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները կիրառել պրակտիկայում:
- Օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ),
- Վերլուծել փաստեր, կատարել հետևություններ, ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված է 2 ընթացիկ բանավոր քննություն, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 3 հարց, որոնք կազմվում են նախօրոք ուսանողներին տրված հարցաշարից: Յուրաքանչյուր հարց գնահատվում է առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է: Առաջին ընթացիկ քննությունը ներառում է թեմա 1-ից 8-ը ներառյալ, երկրորդը՝ թեմա 9-ից 17-ը ներառյալ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## Թեմա 1. Միջազգային մասնավոր իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան,մեթոդները, համակարգը

(1 ժամ դասախոսություն)

1.Միջազգային մասնավոր իրավունքի հասկացությունը: Միջազգային մասնավոր իրավունքի ուսումնասիրման անհրաժեշտությունը և միջազգային-իրավական հրամայականը: Միջազգային տնտեսական, գիտա-տեխնիկական և մշակութային համագործակցությունը: Պետությունների փոխկախվածության խորացումը, տնտեսական հարաբերությունների անդրազգայնացումը, ինտեգրացիոն գործընթացները, տեխնիկական առաջընթացը, միգրացիան և այլ գործոններ, որոնք նպաստում են միջազգային մասնավոր իրավունքի դերի բարձրացմանը:

2.Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման առարկան: Օտարերկրյա տարրով քաղաքացիա-իրավական հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները: Միջազգային մասնավոր իրավունքի և միջազգային հանրային իրավունքի փոխադարձ կապը: Միջազգային մասնավոր իրավունքի տեղը իրավունքի համակարգում:

3.Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման մեթոդները`

3.1.Կոլիզիոն կարգավորման մեթոդը և նրա նշանակությունը: Միջպետական և ներպետական կոլիզիաներ: Միջազգային ունիվերսալ և լոկալ կոլիզիոն ունիֆիկացիա.

3.2.Մատերիալ կարգավորման մեթոդը և նրա նշանակությունը, միջազգային ունիվերսալ և լոկալ մատերիալ ունիֆիկացիա:

4.Օրենսդրության փոխառում /ռեցեպցիա/, ներդաշնակեցում /հարմոնիզացիա/ և միասնականացում /ունիֆիկացիա/:

Միջազգային մասնավոր իրավունքի զարգացման համառոտ պատմությունը: «Անձնական» և «տարածքային» սկզբունքների կիրառումը:

5. Միջազգային մասնավոր իրավունքի համակարգը:

Հարց 1-5 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 2. Միջազգային մասնավոր իրավունքի աղբյուրները

( 1 ժամ դասախոսություն)

1.Իրավունքի աղբյուրների տեսակները: Միջազգային պայմանագրեր, ներպետական օրենսդրություն, դատական և արբիտրաժային պրակտիկա, միջազգային սովորույթներ:

2.Միջազգային պայմանագրերի գերակայությունը և դերի բարձրացումը միջազգային մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման բնագավառում: Միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրեր: Միջազգային պայմանագիրը որպես միջազգային ունիֆիկացիոն ակտ:

3.Ներպետական օրենսդրությունը որպես Միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր:Ներպետական ակտեր, որոնք պարունակում են միջազգային մասնավոր իրավանորմեր:

4.Դատական /արբիտրաժային/ պրակտիկայի դերը միջազգային մասնավոր հարաբերությունների կարգավորման բնագավառում:

5.Միջազգային սովորույթներ: Գործարար շրջանառության սովորույթներ: Միջազգային մասնավոր իրավահարաբերությունները կարգավորող ոչպետական ձևերի դերի բարձրացումը:

Հարց 1-5 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 3. Կոլիզիոն նորմեր և նրանց կիրառումը

( 6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1.Կոլիզիոն նորմերի հասկացությունը և կարգավորիչ գործառույթը: Կոլիզիոն նորմերի կառուցվածքը՝ կոլիզիոն ծավալ և կոլիզիոն կապ:Կոլիզիոն ծավալի ընտրության չափանիշ և տրոհման սահմանները: Կոլիզիոն կապերի ընտրության չափանիշները: Կոլիզիոն կապերի տեսակները: Կոլիզիոն կապի և կոլիզիոն ծավալի փոխհարաբերությունը: Lex causae: Կոլիզիոն նորմերի տեսակները:

2.Կոլիզիոն նորմի մեկնաբանումը. Lex fori-ի տեսություն /Բատիֆոլ, Լագարդ/, lex causae-ի տեսություն /Վոլֆ/, ավտոնոմ որակման տեսություն /Ռաբել/: Կոլիզիոն նորմի մեկնաբանումն ըստ ՀՀ օրենսդրության /ՀՀ քաղ. օր. 1254 հոդվ./:

3.Օտարերկրյա օրենքի բովանդակությունը պարզելը: Օտարերկրյա օրենքը որպես փաստ և որպես «օրենք»՝ ex officio: Օրենսդրական մոտեցումները ՀՀ -ում /ՀՀ քաղ. օր. 1255 հոդվ./:

4.Հետադարձ հղում և հղում երրորդ պետության օրենսդրության: Լուծման հնարավոր տարբերակները: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր. 1260 հոդվ./:

5.Հանրային կարգի վերապահումը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր. 1258 հոդվ./: Օրենքի շրջանցումը: Իմպերատիվ նորմեր / ՀՀ քաղ. օր. 1259 հոդվ./:

6.Փոխադարձություն և ռետորսիա /հակազդամիջոցներ/: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր. 1257 և 1261 հոդվ./:

7.Բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության իրավունքի կիրառումը /ՀՀ քաղ. օր. 1256 հոդվ./:

8.Չճանաչված պետության իրավունքի կիրառումը:

Հարց 1-8 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ: Կատարվում է խնդիրների և թեստերի՝ խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց 1-8 անցկացվում է սեմինար՝ խնդրահարույց հարցերի պարզաբանմամբ:

Հարց **1-8** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողները ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000, Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999):

## Թեմա 4. Ֆիզիկական անձանց քաղաքացիա-իրավական վիճակը միջազգային մասնավոր հարաբերություններում

( 1 ժամ դասախոսություն)

1.Միջազգային մասնավոր հարաբերություններում ֆիզիկական անձանց իրավասուբյեկտության պրոբլեմը: Ֆիզիկական անձանց իրավունակության և գործունակության իրավական կարգավորման բազմազանությունը տարբեր երկրների իրավական համակարգերում: Իրավասուբյեկտության կոլիզիոն-իրավական կարգավորումը: Փախստականների անձնական օրենքը:

2.Ֆիզիկական անձին անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու կոլիզիոն-իրավական կարգավորումը:

3.Ֆիզիկական անձի նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն նշանակելու կոլիզիոն-իրավական կարգավորումը:

Հարց 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ: Իրականացվում է գիտական հաղորդման պատրաստում և ներկայացում: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց **1-3** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողները ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000, Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999):

## Թեմա 5. Իրավաբանական անձանց մասնակցությունը միջազգային մասնավոր հարաբերություններին

( 1 ժամ դասախոսություն)

1.Իրավաբանական անձանց վերաբերյալ հիմնական տեսությունները: Իրավաբանական անձանց անձնական օրենքը: Նստակեցության, ինկորպորացիայի, գործունեության վայրի, «վերահսկման» տեսությունները: Իրավաբանական անձանց անձնական օրենքով որոշվող հարցերի շրջանակը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր.1272 հոդվ./:

2.Համատեղ և օտարերկրյա կազմակերպությունների իրավական վիճակը:

Հարց 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես

պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց 1-2 Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողները ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000, Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999):

### Թեմա 6. Պետության մասնակցությունը միջազգային մասնավոր հարաբերություններին

( ինքնուրույն աշխատանք)

1.Քաղաքացիա-իրավական հարաբերություններին պետության մասնակցության հիմունքները: Պետության մասնակցությունը քաղաքացիա-իրավական հարաբերություններին՝ օտարերկրյա տարրով: Պետության իմունիտետը: Ֆունկցիոնալ և բացարձակ իմունիտետ: Պետության իմունիտետն ըստ ԱՄՆ-ի, Անգլիայի և մյուս երկրների օրենսդրության:

2.Պետության իմունիտետի մասին եվրոպական կոնվենցիա /1978 թ./:

3. Միջազգային կազմակերպությունների իմունիտետը:

Հարց 1-3 Ուսանողները ինքնուրույն ուսումնասիրում են նյութը (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ, Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000, Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999.):

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### Թեմա 7. Սեփականության իրավունքի հարցերը միջազգային մասնավոր հարաբերություններում

( 1 ժամ դասախոսություն)

1. Սեփականության իրավունքի կոլիզիոն կարգավորումը: Շարժական և անշարժ գույքի կոլիզիոն կարգավիճակները: Սեփականության իրավունքի բնագավառում այլընտրանքային կոլիզիոն մոտեցումները /ժառանգման, ընտանեկան իրավունքի հարցերով/: Lex personalis և lex rei sitae կոլիզիոն սկզբունքների համադրումը: Սեփականության իրավունքի ծագման և դադարման կոլիզիոն հարցերը միջազգային մասնավոր իրավունքում:

2. Օտարերկրյա ներդրումների, որպես օտարերկրյա սեփականության, հասկացությունը և չափանիշները: Օտարերկրյա ներդրումների իրականացման տեսակները /օբյեկտները/:

3. Ազգայնացման մասին ակտի անդրազգային ճանաչման հիմնախնդիրը:

Հարց 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես

պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 8. Միջազգային մասնավոր պայմանագրերի իրավական կարգավորումը

( 5 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Պարտավորությունների կոլիզիոն-իրավական կարգավորումը: Գործարքի ձևի կոլիզիոն կարգավորումը: Միջազգային մասնավոր պայմանագրի նկատմամբ կիրառվող օրենքը՝
- «կամքի ինքնավարություն» /lex voluntaris/,
- Lex venditoris: Lex venditoris – ի հետ համադրվող այլ կոլիզիոն կապեր: «Միջազգային մասնավոր պայմանագրի նկատմամբ կիրառվող օրենք»-ով կարգավորվող հարցերի շրջանակը:

2. Եվրոմիության կոնվենցիան պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող օրենքի մասին /Հռոմ, 1980թ./:

3. Միջազգային առուծախի միջազգային-իրավական կարգավորումը /1980թ. Վիենայի Միջազգային առուծախի մասին կոնվենցիա/: Վիենայի 1980թ. կոնվենցիայի կիրառման ոլորտը, միջազգային առուծախի պայմանագրի կողմերի իրավունքերն ու պարտականությունները:

4. Միջազգային լիզինգի և միջազգային ֆակտորինգի միջազգային-իրավական կարգավորումը /Օտտավայի 1988թ. համապատասխան կոնվենցիաները/:

5. Գործակալման համաձայնագրերի նկատմամբ կիրառվող իրավունքի մասին կոնվենցիան /Հաագա, 1978թ./:

6. Միջազգային առուծախի բնագավառում ներկայացուցչության մասին կոնվենցիան /Հաագա, 1983թ./:

7. Անդրազգային իրավական համակարգի ձևավորումը /Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքները, Եվրոպական կոնտրակտային իրավունքի սկզբունքները/:

8. Սովորույթները միջազգային առևտրի բնագավառում՝ INCOTERMS:

| International commercial terms | | | |
|---|---|---|---|
| E | F | C | D |
| EXW | FCA<br>FAS<br>FOB | CFR<br>CIF<br>CPT<br>CIP | DAT<br>DAP<br>DDP |

Հարց 1-8 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ: Իրականացվում է խնդիրների լուծում, հայրենական և օտարերկրյա դատական պրակտիկայից օրինակների վերլուծություն և խմբային քննարկում: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.; Հայկյանց Ա.Մ. Ապրանքների միջազգային առուվաճառքի իրավական կարգավորումը /գիտագործնական ձեռնարկ/ Երևան, «Ասողիկ». 2011):

Հարց 1-8 անցկացվում է սեմինար՝ խնդրահարույց հարցերի պարզաբանմամբ:

## Թեմա 9. Միջազգային մասնավոր փոխադրումների միջազգային-իրավական կարգավորումը

( 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1.Միջազգային փոխադրումների հասկացությունը, իրավական կարգավորման առանձնահատկությունները: Միջազգային փոխադրումների տեսակները:

2.Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ: Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների մասին 1956թ. կոնվենցիա /ԺՃՆ/: ԱՊՀ 1997թ. կոնվենցիան ուղևորների և ուղեբեռի միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին:

3.Միջազգային երկաթուղային փոխադրումներ: Բեռնի 1980թ-ի Համաձայնագիրը միջազգային երկաթուղային փոխադրումների մասին:

4.Միջազգային օդային փոխադրումներ: Վարշավայի 1929թ. Միջազգային օդային փոխադրումների մասին կոնվենցիան և Հաագայի 1955թ. արձանագրությունը: 1999թ. Մոնրեալի կոնվենցիան միջազգային օդային փոխադրումների մասին:

5.Միջազգային ծովային փոխադրումներ: Բրյուսելի 1924թ. կոնվենցիան Կոնոսամենտի վերաբերյալ որոշ կանոնների ունիֆիկացման մասին, Համբուրգի 1978թ. կոնվենցիան միջազգային ծովային բեռնափոխադրումների մասին, Աթենքի 1974թ. կոնվենցիան ուղևորների և ուղեբեռի միջազգային ծովային փոխադրումների մասին:

6.ՄԱԿ-ի 1980թ. կոնվենցիան միջազգային խառը բեռնափոխադրումների մասին:

Հարց 1-6 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ: Պրոբլեմային հարցերի վերաբերյալ իրականացվում է գիտական զեկույցների պատրաստում և քննարկում: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց 1-6 անցկացվում է սեմինար՝ խնդրահարույց հարցերի պարզաբանմամբ:

## Թեման 10. Միջազգային հաշվարկային հարաբերություններ

( 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1.Միջազգային հաշվարկային հարաբերությունների հասկացությունը, իրավական կարգավորման խնդիրները: Միջազգային հաշվարկների իրականացման ձևերը:

2.Միջազգային բանկային փոխանցումների իրավական կարգավորումը:

3.Միջազգային ինկասո հաշվարկների իրականացումը: Ինկասոյի ունիֆիկացիոն կանոնները՝ 1995թ. /Միջազգային առևտրական պալատ/:

4.Միջազգային ակրեդիտիվային հաշվարկների իրականացումը: Ակրեդիտիվի ունիֆիկացիոն կանոնները և սովորույթները՝ 1993թ. /Միջազգային առևտրական պալատ/:

5.Միջազգային հաշվարկներ՝ մուրհակներով: 1930թ. կոնվենցիան հասարակ և փոխանցվող մուրհակների մասին օրենքների միջև կոլիզիան հարթելու մասին: 1934թ. Ժնևի կոնվենցիան հասարակ և փոխանցվող մուրհակի վերաբերյալ միասնական օրենք սահմանելու մասին:

6.Չեկերի մասին միասնական օրենքի մասին կոնվենցիա /Ժնև, 1931 թ./, Չեկերի մասին օրենքների միջև որոշ կոլիզիաների լուծման մասին կոնվենցիա /Ժնև, 1931 թ./

Հարց 1-6 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ: Իրականացվում է հայրենական և օտարերկրյա պրակտիկայից օրինակների վերլուծություն և քննարկում: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց 1-6 անցկացվում է սեմինար՝ խնդրահարույց հարցերի պարզաբանմամբ:

## Թեմա 11. Արտապայմանագրային պարտավորությունները միջազգային մասնավոր իրավունքում

( 1 ժամ դասախոսություն)

1. Դելիկտային պարտավորությունների կոլիզիոն-իրավական կարգավորումը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր. 1289 հոդվ./:

2. Բրյուսելի 1969թ. կոնվենցիան ծովը նավթով աղտոտելու հետևանքով ծագող քաղաքացիա-իրավական պատասխանատվության մասին:

3. Ապրանքների թերությունների հետևանքով հասցված վնասի համար պատասխանատվության մասին կոնվենցիա /Հաագա, 1973թ./:

4. 1991թ. ՄԱԿ-ի կոնվենցիան ավտոմոբիլային, երկաթուղային և ներքին ջրային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրմամբ հասցված վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին:

5. Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր. 1290 հոդվ./:

Հարց 1-5 Անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց 1-5 Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողները ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000, Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999):

## Թեմա 12. Մտավոր սեփականության միջազգային-իրավական պաշտպանությունը

( 2 ժամ դասախոսություն)

1.Մտավոր սեփականության հասկացությունը: Մտավոր սեփականության նկատմամբ իրավունքի տարածքային բնույթը: Միջազգային առևտուրը և մտավոր սեփականության պաշտպանության հիմնահարցերը:

2.Հեղինակային իրավունք - Հեղինակային իրավունքների միջազգային պաշտպանությունը: Բեռնի կոնվենցիան գրական և գեղարվեստական երկերի պաշտպանության մասին /1886թ./: Հեղինակային իրավունքների մասին համաշխարհային կոնվենցիան /Ժնև,1952/:

3.Հարակից իրավունքներ - Դերասան-կատարողների, ձայնագրող և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա /Հռոմ, 1961թ./:

4.Արտոնագրային իրավունք - Արտոնագրային իրավունքների միջազգային պաշտպանությունը: Փարիզի կոնվենցիան Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին /1883թ./: Մադրիդի կոնվենցիան Գործարանային և ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին /1891թ./:

Պայմանագիր արտոնագրային կոոպերացման մասին /Վաշինգտոն, 1970թ./:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիան /ԱՊՀ, 1994թ./:

Հարց 1-4 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ: Իրականացվում է բանավեճերի, գործնական խաղերի կազմակերպում, պրեզենտացիաների պատրաստում և ներկայացում: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 13. Ժառանգման հարցերը միջազգային մասնավոր իրավունքում

( 1 ժամ դասախոսություն)

1.Ժառանգման իրավունքի բնագավառում ընդունված կոլիզիոն մոտումները՝ lex personalis, lex rei sitae: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /ՀՀ քաղ. օր. 1292 և 1293 հոդվ./:

2.Ժառանգման իրավունքի կոլիզիոն կարգավորումը Իրավական օգնության շուրջ կնքված միջազգային պայմանագրերում /Քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին կոնվենցիա, ԱՊՀ-1993թ./:

Հարց 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սլայդների օգտագործմամբ և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

Հարց 1-2 Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողները ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000, Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999):

## Թեմա 14. Ընտանեկան իրավունքի հարցերը միջազգային մասնավոր իրավունքում

(ինքնուրույն աշխատանք)

1.Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները ամուսնական և ընտանեկան հարաբերություններում:

2.Ամուսնության կնքման կոլիզիոն կարգավորումը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /Ընտ. օր. 141հոդվ./: Հյուպատոսական ամուսնություն /Ընտ. օր. 142 հոդվ./:

3.Ամուսնալուծության կոլիզիոն կարգավորումը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /Ընտ. օր. 145 հոդվ/:

4.Ամուսինների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները /Ընտ. օր. 146 հոդվ./:

5.Հայրությունը /մայրությունը/ որոշելու կոլիզիոն կարգավորումը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /Ընտ. օր. 147 հոդվ/:

6.Որդեգրման կոլիզիոն կարգավորումը: Օրենսդրական մոտեցումները ՀՀ-ում /Ընտ. օր. 150 հոդվ/:

7.Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները /Ընտ. օր. 148 հոդվ./, չափահաս զավակների և ընտանիքի այլ անդամների ալիմենտային պարտավորությունները /Ընտ. օր. 149 հոդվ/:

Հարց 1-7 Ուսանողները ինքնուրույն ուսումնասիրում են նյութը (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 15. Միջազգային աշխատանքային հարաբերություններ

( ինքնուրույն աշխատանք)

1.ՀՀ օրենսդրությամբ առկա կոլիզիոն մոտեցումները միջազգային աշխատանքային հարաբերությունների բնագավառում /Աշխ. օր. 7 և 8 հոդվածներ/: Իմպերատիվ նորմերը միջազգային աշխատանքային հարաբերություններում:

2.Աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորումը օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններում /Աշխ. օր. 7 հոդվ./:

3.Աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորումը միջազգային կազմակերպություններում:

4.Աշխատանքային միգրացիա: Միջազգային աշխատանքային հարաբերությունների բնագավառում կիրառվող հիմնական կոլիզիոն սկզբունքները:

Հարց 1-4 Ուսանողները ինքնուրույն ուսումնասիրում են նյութը (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 16. Միջազգային քաղաքացիական դատավարություն

( ինքնուրույն աշխատանք)

1.Միջազգային քաղաքացիական դատավարության հասկացությունը: Միջազգային ընդդատություն: Պրորոգացիոն համաձայնություն: Բացառիկ ընդդատություն: Տնտեսական գործունեության իրականացման հետ կապված վեճերի լուծման կարգի մասին Համաձայնագիրը /ԱՊՀ, 1992թ./:

2.Օտարերկրյա դատական հանձնարարությունների կատարումը: Օտարերկրյա դատական հանձնարարությունները կատարելուց հրաժարվելու հիմքերը: 3.Օտարերկրյա դատական որոշումների /վճիռների/ ճանաչումը և հարկադիր կատարումը. Իրավական օգնության շուրջ կնքված միջազգային պայմանագրեր /Քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին կոնվենցիայի շրջանակներում , ԱՊՀ-1993թ/:

4.Օտարերկրյա պետության դատական իմունիտետը:

Հարց 1-4 Ուսանողները ինքնուրույն ուսումնասիրում են նյութը (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

## Թեմա 17. Միջազգային առևտրային արբիտրաժ

( ինքնուրույն աշխատանք)

1.Միջազգային առևտրային արբիտրաժի հասկացությունը: Արբիտրաժային վերապահում:

2.Առևտրային վեճերի լուծման արբիտրաժային կարգի առավելությունները: Արբիտրաժ ad hoc և ինստիտուցիոնալ /մշտապես գործող/ արբիտրաժ:

3.Արբիտրաժային կանոնակարգ UNCITRAL :

4.Արբիտրաժի որոշումների և վճիռների հարկադիր կատարման մեխանիզմը: Օտարերկրյա արբիտրաժի որոշումների և վճիռների ճանաչումը և հարկադիր կատարումը: Նյու Յորքի կոնվենցիան Օտարերկրյա արբիտրաժի որոշումների և վճիռների ճանաչման և հարկադիր կատարման մասին /1958թ./

Հարց 1-4 Ուսանողները ինքնուրույն ուսումնասիրում են նյութը (պահանջվող նյութը՝ Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.):

# ՑԱՆԿ

### առաջադրվող գրականության և ինտերնետ էջերի


1. Հայկյանց Ա.Մ. Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք. ԵՊՀ հրատ. 2013թ.
2. Հայկյանց Ա.Մ. Ապրանքների միջազգային առուվաճառքի իրավական կարգավորումը /գիտագործնական ձեռնարկ/ Երևան, «Ասողիկ». 2011
3. Ануфриева Л.П. Международное частное право, Учебник, общая часть, М-2000,
4. Бекяшев К.А., Ходаков А.Г. Международное частное право, Сборник документов, М-1997,
5. Богуславский М.М. Международное частное право, практикум, М-1999,
6. Дмитриева Г.К., Филимонова М.В. Международное частное право, Действующие нормативные акты, М-1999,
7. Довгерт А.С. Правовое регулирование международных трудовых отношений, Киев-1992,
8. Ермолаев В.Г., Сиваков О.В. Международное частное право, курс лекций, М-1999,
9. Звеков В.П. Международное частное право, курс лекций М-1999,
10. Зыкин И.С. Внешнеэкономические операции: право и практика, М-1994,
11. Иссад М. Международное частное право, М-1989,
12. Кох Х., Магнус У., Винклер фон Моренфельс П. Международное частное право и сравнительное правоведение, М-2001,
13. Лунц Л.А. Международное частное право, М-1970,
14. Международное частное право, Учебник, под ред. Г.К.Дмитриевой,
15. Минаков А.И. Арбитражные соглашения и практика рассмотрения бнешнеэкономических споров, М-1985,
16. Перетерский И.С., Крылов С.Б. Международное частное право, М-1959,
17. Поздняков В.С. Международный коммерческий арбитраж в РФ, М-1996,
18. Раапе Л. Международное частное право, М-1970,
19. Розенберг М.Г. Международный договор и иностранное право, М-1998,
20. Чешир , Норт Международное частное право, М-1982,
21. Швыдков Н.Г. Международная унификация коллизионных норм семейного права /Право и экономика. 1995, 15-16/,
22. Шмиттгофф К. Экспорт: право и практика международной торговли, М-1993.


**Ինտերնետ էջեր (սայթեր)**

1. www.uncitral.org
2. www.hcch.net
3. www.unidroit.org
4. www.lexinfosys.de
5. www.wipo.org
1. www.miripravo.ru
2. http://convenyions.coe.int/

3. http://europa.eu.int/
4. http://www.cisg.ru/content/

# 1-ին ընթացիկ ստուգման հարցաշար

1. Միջազգային մասնավոր շրջանառության դինամիկան և իրավական կարգավորման հիմնախնդիրները
2. Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման առարկան
3. Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման մեթոդների էվոլյուցիան
4. Միջազգային մասնավոր իրավունքի տեղը իրավունքի համակարգում
5. Գլոսատորների և պոստգլոսատորների տերը միջազգային մասնավոր իրավունքի զարգացման գործում
6. Ինքնավար կամքի տեսության ձևավորումը և նշանակությունը միջազգային մասնավոր իրավունքում
7. Comitas gentium տեսության ձևավորումը և նշանակությունը միջազգային մասնավոր իրավունքում
8. Ունիվերսալիզմի տեսության ձևավորումը և նշանակությունը միջազգային մասնավոր իրավունքում
9. Միջազգային մասնավոր իրավունքի և միջազգային հանրային իրավունքի հարաբերակցությունը
10. Կոլիզիոն նորմերի հասկացությունը, կառուցվածքը, կարգավորիչ գործառույթը
11. Կոլիզիոն նորմերի մեկնաբանման տեսությունները և դրանց արտացոլումը ՀՀ օրենսդրությամբ
12. Օտարերկրյա օրենքի կիրառումը և մեկնաբանումը ՀՀ-ում: Օտարերկրյա օրենքի ոչ ճիշտ մեկնաբանման իրավական հետևանքները
13. Հետադարձ հղման և երրորդ պետության օրենսդրությանը կատարվող հղման պրոբլեմը, դրա լուծման հնարավոր տարբերակները
14. Հանրային կարգի վերապահումը միջազգային մասնավոր իրավունքում
15. Ազգային, միջազգային և վերազգային իմպերատիվ նորմերը և դրանց դերը միջազգային մասնավոր իրավունքում
16. Բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության իրավունքի կիրառման պրոբլեմը
17. Փոխադարձություն և ռետորսիա
18. Չճանաչված պետության իրավունքի կիրառման պրոբլեմը միջազգային մասնավոր իրավունքում
19. Lex causae-ն որպես կոլիզիոն կապ
20. Կոլիզիոն-իրավական ունիֆիկացիան. զարգացման արդի միտումները
21. Մատերիալ-իրավական ունիֆիկացման պատմական էվոլյուցիան
22. Ֆիզիկական անձանց իրավասուբյեկտության կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
23. Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց անհայտ բացակայող և մահացած հայտարարելը, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելը
24. Իրավաբանական անձի անձնական օրենքը որոշելու տեսությունները
25. Իրավաբանական անձի իրավասուբյեկտության կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
26. Պետությունը որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտ

27. Գույքային և անձնական ոչգույքային իրավունքների կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
28. Պայմանագր ձևի և բովանդակության կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
29. Lex voluntaris-ը որպես կոլիզիոն կապ
30. Lex venditoris
31. Միջազգային առևտրային պայմանագրերի կոլիզիոն-իրավական կարգավորումը Հաագայի կոնվենցիաների շրջանակներում
32. Ապրանքների միջազգային առուծախի մասին Վիենայի 1980թ. կոնվենցիայի կիրառման ոլորտը, կառուցվածքը
33. Միջազգային ներկայացուցչության մասին Ժնևի 1983թ. կոնվենցիայի կիրառման ոլորտը, կառուցվածքը, բովանդակությունը
34. Միջազգային լիզինգի մասին և Միջազգային ֆակտորինգի մասին Օտտավայի 1988թ. կոնվենցիաների ընդհանուր բնութագիրը
35. Միջազգային առևտրային պայմանագրերի Սկզբունքների ընդունման պատմությունը, նշանակությունը
36. Բարեխղճության և ազնիվ գործարար պրակտիկայի սկզբունքը միջազգային առևտրային հարաբերություններում
37. Խոչնդոտները և դրանց լուծման ուղիները միջազգային առևտրային պայմանագրային հարաբերություններում` ըստ ՈՒՆԻԴՐՈՒԱ Սկզբունքների
38. Պայմանագրերի մեկնաբանումը: «Contra proferentem» սկզբունքը միջազգային առևտրային հարաբերություններում
39. Միջազգային գործարար սովորույթները որպես միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր
40. ԻՆԿՈՏԵՐՄՍ – E և F կատեգորիաների ընդհանուր բնութագիրը
41. ԻՆԿՈՏԵՐՄՍ- C և D կատեգորիաների ընդհանուր բնութագիրը

# 2-րդ ընթացիկ ստուգման հարցաշար

1. Միջազգային բանկային փոխանցումների իրավական կարգավորումը
2. Միջազգային ինկասո հաշվարկների իրավական կարգավորումը
3. Միջազգային ակրեդիտիվային հաշվարկների իրավական կարգավորումը
4. Մուրհակներով միջազգային հաշվարկներ իրականացման իրավական կարգավորումը
5. Միջազգային փոխադրումների հասկացությունը, իրավական կարգավորման առանձնահատկությունները
6. Միջազգային օդային փոխադրումների իրավական կարգավորումը Վարշավայի համակարգի պետություններում
7. Միջազգային օդային փոխադրումների իրավական կարգավորումը Մոնրեալի կոնվենցիայի շրջանակներում
8. Միջազգային ծովային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը Բրյուսելի կոնվենցիայի շրջանակներում
9. Միջազգային ծավային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը Համբուրգի կոնվենցիայի շրջանակներում
10. Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը Ժնևի կոնվենցիայի շրջանակներում
11. Միջազգային ավտոմոբիլային ուղևորական փոխադրումների իրավական կարգավորումը
12. Միջազգային երկաթուղային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը
13. Միջազգային խառը բեռնափոխադրումների իրավական կարգավորումը

14. Վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորությունների կոլիզիոն իրավական կարգավորումը և իրավական չկարգավորման խնդիրները ՀՀ-ում
15. Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների իրավական կարգավորումը
16. Ժառանգման հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորումը և իրավական կարգավորման բացերը ՀՀ-ում
17. Կտակների միջազգային գրանցման բազելյան համակարգը
18. Հեղինակային իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը Բեռնի կոնվենցիայի շրջանակնրում
19. Հեղինակային իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը Ժնևի կոնվենցիայի շրջանակնրում
20. Հարակից իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը Հռոմի կոնվենցիայի շրջանակներում
21. Արդյունաբերական սեփականության միջազգային-իրավական պաշտպանությունը Փարիզի կոնվենցիայի շրջանակներում
22. Ապրանքային նշանների միջազգային գրանցումն ըստ Մադրիդի կոնվենցիայի
23. Աշխատանքային հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում
24. Ամուսնության և ամուսնալուծության կոլիզիոն իրավական կարգավորումը և հիմնախնդիրները ՀՀ օրենսդրությամբ
25. Ամուսինների, ծնողների և զավակների գույքային և անձնական ոչգույքային հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
26. Միջազգային որդեգրման հիմնախնդիրները և իրավական կարգավորումը ընդհանուր բնութագիրը
27. Օտարերկրյա քաղաքացիական կացության ակտերի ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում
28. Միջազգային ընդդատությունն ըստ ՀՀ օրենսդրության
29. Պետության դատական իմունիտետը
30. Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում
31. Միջազգային առևտրային արբիտրաժի հասկացությունը: Արբիտրաժային կարգով առևտրային վեճերի լուծման առանձնահատկությունները
32. Արբիտրաժային վերապահում
33. Ex aequo et bono սկզբունքը միջազգային առևտրային արբիտրաժում
34. Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում:

# ՀԱՐՑԱՇԱՐ

միջազգային մասնավոր իրավունք

1. Միջազգային մասնավոր շրջանառության դինամիկան և իրավական կարգավորման հիմնախնդիրները
2. Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման առարկան
3. Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման մեթոդների էվոլյուցիան
4. Միջազգային մասնավոր իրավունքի տեղը իրավունքի համակարգում
5. Գլոսատորների և պոստգլոսատորների տերը միջազգային մասնավոր իրավունքի զարգացման գործում

6. Ինքնավար կամքի տեսության ձևավորումը և նշանակությունը միջազգային մասնավոր իրավունքում
7. Comitas gentium տեսության ձևավորումը և նշանակությունը միջազգային մասնավոր իրավունքում
8. Ունիվերսալիզմի տեսության ձևավորումը և նշանակությունը միջազգային մասնավոր իրավունքում
9. Միջազգային մասնավոր իրավունքի և միջազգային հանրային իրավունքի հարաբերակցությունը
10. Կոլիզիոն նորմերի հասկացությունը, կառուցվածքը, կարգավորիչ գործառույթը
11. Կոլիզիոն նորմերի մեկնաբանման տեսությունները և դրանց արտացոլումը ՀՀ օրենսդրությամբ
12. Օտարերկրյա օրենքի կիրառումը և մեկնաբանումը ՀՀ-ում: Օտարերկրյա օրենքի ոչճիշտ մեկնաբանման իրավական հետևանքները
13. Հետադարձ հղման և երրորդ պետության օրենսդրությանը կատարվող հղման պրոբլեմը, դրա լուծման հնարավոր տարբերակները
14. Հանրային կարգի վերապահումը միջազգային մասնավոր իրավունքում
15. Ազգային, միջազգային և վերազգային իմպերատիվ նորմերը և դրանց դերը միջազգային մասնավոր իրավունքում
16. Բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության իրավունքի կիրառման պրոբլեմը
17. Փոխադարձություն և ռետորսիա
18. Չճանաչված պետության իրավունքի կիրառման պրոբլեմը միջազգային մասնավոր իրավունքում
19. Lex causae-ն որպես կոլիզիոն կապ
20. Կոլիզիոն-իրավական ունիֆիկացիան. զարգացման արդի միտումները
21. Մատերիալ-իրավական ունիիֆիկացման պատմական էվոլյուցիան
22. Ֆիզիկական անձանց իրավասուբյեկտության կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
23. Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց անհայտ բացակայող և մահացած հայտարարելը, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելը
24. Իրավաբանական անձի անձնական օրենքը որոշելու տեսությունները
25. Իրավաբանական անձի իրավասուբյեկտության կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
26. Պետությունը որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտ
27. Գույքային և անձնական ոչգույքային իրավունքների կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
28. Պայմանագր ձևի և բովանդակության կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
29. Lex voluntaris-ը որպես կոլիզիոն կապ
30. Lex venditoris
31. Միջազգային առևտրային պայմանագրերի կոլիզիոն-իրավական կարգավորումը Հաագայի կոնվենցիաների շրջանակներում
32. Ապրանքների միջազգային առուծախի մասին Վիենայի 1980թ. կոնվենցիայի կիրառման ոլորտը, կառուցվածքը
33. Միջազգային ներկայացուցչության մասին Ժնևի 1983թ. կոնվենցիայի կիրառման ոլորտը, կառուցվածքը, բովանդակությունը
34. Միջազգային լիզինգի մասին և Միջազգային ֆակտորինգի մասին Օտտավայի 1988թ. կոնվենցիաների ընդհանուր բնութագիրը

35. Միջազգային առևտրային պայմանագրերի Սկզբունքների ընդունման պատմությունը, նշանակությունը
36. Բարեխղճության և ազնիվ գործարար պրակտիկայի սկզբունքը միջազգային առևտրային հարաբերություններում
37. Խոչնդոտները և դրանց լուծման ուղիները միջազգային առևտրային պայմանագրային հարաբերություններում՝ ըստ ՈՒՆԻԴՐՈՒԱ Սկզբունքների
38. Պայմանագրերի մեկնաբանումը: «Contra proferentem» սկզբունքը միջազգային առևտրային հարաբերություններում
39. Միջազգային գործարար սովորույթները որպես միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր
40. ԻՆԿՈՏԵՐՄՍ – E և F կատեգորիաների ընդհանուր բնութագիրը
41. ԻՆԿՈՏԵՐՄՍ- C և D կատեգորիաների ընդհանուր բնութագիրը
42. Միջազգային բանկային փոխանցումների իրավական կարգավորումը
43. Միջազգային ինկասո հաշվարկների իրավական կարգավորումը
44. Միջազգային ակրեդիտիվային հաշվարկների իրավական կարգավորումը
45. Մուրհակներով միջազգային հաշվարկներ իրականացման իրավական կարգավորումը
46. Միջազգային փոխադրումների հասկացությունը, իրավական կարգավորման առանձնահատկությունները
47. Միջազգային օդային փոխադրումների իրավական կարգավորումը Վարշավայի համակարգի պետություններում
48. Միջազգային օդային փոխադրումների իրավական կարգավորումը Մոնրեալի կոնվենցիայի շրջանակներում
49. Միջազգային ծովային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը Բրյուսելի կոնվենցիայի շրջանակներում
50. Միջազգային ծովային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը Համբուրգի կոնվենցիայի շրջանակներում
51. Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը Ժնևի կոնվենցիայի շրջանակներում
52. Միջազգային ավտոմոբիլային ուղևորական փոխադրումների իրավական կարգավորումը
53. Միջազգային երկաթուղային բեռնափոխադրումների իրավական կարգավորումը
54. Միջազգային խառը բեռնափոխադրումների իրավական կարգավորումը
55. Վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորությունների կոլիզիոն իրավական կարգավորումը և իրավական չկարգավորման խնդիրները ՀՀ-ում
56. Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների իրավական կարգավորումը
57. Ժառանգման հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորումը և իրավական կարգավորման բացերը ՀՀ-ում
58. Կտակների միջազգային գրանցման բազելյան համակարգը
59. Հեղինակային իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը Բեռնի կոնվենցիայի շրջանակնրում
60. Հեղինակային իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը Ժնևի կոնվենցիայի շրջանակնրում
61. Հարակից իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը Հռոմի կոնվենցիայի շրջանակներում
62. Արդյունաբերական սեփականության միջազգային-իրավական պաշտպանությունը Փարիզի կոնվենցիայի շրջանակներում
63. Ապրանքային նշանների միջազգային գրանցումն ըստ Մադրիդի կոնվենցիայի

64. Աշխատանքային հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում
65. Ամուսնության և ամուսնալուծության կոլիզիոն իրավական կարգավորումը և հիմնախնդիրները ՀՀ օրենսդրությամբ
66. Ամուսինների, ծնողների և զավակների գույքային և անձնական ոչգույքային հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորումը ՀՀ-ում
67. Միջազգային որդեգրման հիմնախնդիրները և իրավական կարգավորումը ընդհանուր բնութագիրը
68. Օտարերկրյա քաղաքացիական կացության ակտերի ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում
69. Միջազգային ընդդատությունն ըստ ՀՀ օրենսդրության
70. Պետության դատական իմունիտետը
71. Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում
72. Միջազգային առևտրային արբիտրաժի հասկացությունը: Արբիտրաժային կարգով առևտրային վեճերի լուծման առանձնահատկությունները
73. Արբիտրաժային վերապահում
74. Ex aequo et bono սկզբունքը միջազգային առևտրային արբիտրաժում
75. Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում: